գերին ինկեաւ. մէկն էլ ուր ըէրնով օրհնեց Տաւիթ ու Մարայ առքեարն անիծեց:

82. Տաւիթ ուր պատրաստուէն որ տէսաւ. քանի մը խաչիւոր մարդ ժօղվեցին, Տաւիթին ինկեր տվին, ճամփեցին: Տաւիթն էն խալխոռնեռուն վէրէն խղճաց, ասաց. «Տիւք գնացէք Ծովասարու Մարուխի քանձր Աստուածածին, ձիկ խամար աղօթք արէք: Ես կէրթամ կռվեզու»:

83. Տաւիթ գնաց խաստաւ մէկ բարակ առու մը, ձին չուզեց ընցնել էն առվից. քիւնչի Մէկէն երը էնտեղ խասնէր, խանք[1] կառնէր: Տաւիթ տէսաւ, որ ձին չանցնե, իջաւ քնաւ: Ձին էլ կացնաւ արևու դէմ, խօվ արեց վէրէն: Մարուխի վանքի պատարագ որ պռձան, խրեշտակին էկաւ խմացուց ձիուն, ձին էլ Տաւիթին: Տաւիթն որ էլաւ նստաւ, մէկ խաստ վռընքատաց, ուր մէջ քեամար ֆէհրսին, որ քառասուն կիսր բամբակ տրեր էր մէջ, կապէր էր, անջախ կէլնէր ուր մէջկով, վռնքատալուն պէտ քեամար կառավաւ. ինքն, քիւնչի տհայ[2] պտիկ էր, էն գեախ ճրոճացաւ, լցուաւ, էլաւ չանց[3] ուր խէր:

84. Էլաւ թռաւ վեր ձիուն, Աստծու անուն տվեց, քշեց խաստաւ Ծովասարու մօտ, էն քեարեբուց, ախպրներուց, ասբերուց խալալուէթեն ուզեց: Մնաք բարով, ասաց ու սկսեց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն.

Ծովասարու պաղ պաղ ախպրները, մնացէք բարով, բարի մնացէք:

Ես կէրթամ կռվի, կծարխնամ, տիւք կարօտ մնացէք:

Ծովասարու պաղ պաղ քեամիքն էլ մնացէք բարով, բարի մնացէք:

Ես կէրթամ կռվի, կշոգանամ, տիւք խով մնացէք:»

85. Աստց ու քշեց գնաց խեծլի տիմաց. տէսաւ որ երկնուց աստղին խևատպ կէր, ինոնց վրանին հետապ չկէր: Էնտեղ իջաւ նստաւ, մէղեց վեր ուր հալին: Տարթլանմիշ[4] եղաւ, ասեց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն:

Ես էլնեմ գեարնան դէլ, ինոնք էլնեն գեարնան գետաւ, չեմ կանայ արնոտե:

Ինոնք էլնեն բամբակ, էս էլնեմ կրակ, չեմ կանայ մշախարե:

Ինոնք էլնեն վռւշն վռւլախ[5], չոր ցախ, ես էլնեմ ըոց ու կրակ, չեմ կանայ վառե:

---

1 Հանգիստ: 2 Տակաւին, դեռ հաս: 3 Քանց: 4 Յաւիտ. դարտռուել: 5 Ապիտակ խոտ: